

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների ընթացքում օգտագործվող V և V_w դասերին պատկանող պայթյունավտանգավոր հրագործական արտադրատեսակների կազմում կիրառման համար նախատեսված հրագործական բաղադրություններին հատկանշական է պայթյունի (այդ թվում՝ առանց օդի, թթվածնի մասնակցության պայթյունի) վտանգի առաջացման ունակությունը:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների ընթացքում օգտագործվող արտադրատեսակների (ըստ պոտենցիալ վտանգավորության մակարդակի կամ վտանգավոր գործոնների) հիմնական չափորոշիչներն են՝

1) այրվող արգասիքների բոց կամ բարձրաջերմաստիճանային շիթ՝ ամբողջ բոցը.

2) կոնստրուկցիայի այս ու այն կողմ նետվող (տարածվող) հրդեհավտանգ տարրեր (շիկացած հաբեր, շիկացած խարամ, կայծեր և այլն)՝ թռիչքի շառավղով սահմանափակված ամբողջ մակերեսը.

3) ջերմային (ինֆրակարմիր) ճառագայթում՝ մակերևույթային խտությունը 540 Վտ/մ^2 և ավելի.

4) պայթյունի ժամանակ հարվածային ալիք՝ ճնշման մակարդակը $35 \cdot 10^3$ պասկալ (Պա) և ավելի.

5) թռչող խոցող բեկորներ՝ թռիչքի շառավղով սահմանափակված ամբողջ մակերեսը.

6) արտանետման սկզբնական արագության հաշվին կամ ռեակտիվ ուժի ներգործության տակ շարժվող հրագործական արտադրատեսակ կամ հրագործական տարր՝ կինետիկ էներգիան 20 Զ (ջոուլ) և ավելի.

7) ձայնական ճառագայթում՝ ձայնի մակարդակը՝ իպուլսայինի դեպքում 140 և ավելի դԲ (դեցիբել), երկարատևի դեպքում 120 և ավելի դԲ (դեցիբել).

8) օպտիկական ճառագայթում՝ հոսքի խտությունը $1 \cdot 10^4$ և ավելի Ջ/մ^2 (ջոուլ մետր քառակուսու վրա).

9) այրման արգասիքներ կամ օդակախոյթային վիճակում մանրացում.

10) մարդու և շրջակա միջավայրի վրա այրման արգասիքների յուրահատուկ ներգործություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ